խօսել ինքը պ. Աւետօվը, բայց նա կատարելապէս անընդունակ գտնվեց խօսելու, որպէս զի-նուորական այնպէս կրքոտ և բորբոքված ըսկսեց, որ դուման միաձայն կանգնեց և ասաց՝ չենք լսում Աւետօվին։ Սկսեց գաղտնի քուէարկութիւնը. 24 մարդ Աւետօվի ռօճիկը պակասեցրեց 1500-ից 500 ր. 4 մարդ հակառակ էին այդ մտքի հետ։ Միւս օրը պ. Աւետօվը հրաժարական տուեց. հէնց այդ էր դումայի փափագը։

Սակայն մի երեոյթ ինձ շատ զարմացնում էր։ Երբ սրանից մի քանի ամիս առաջ դարձեալ հարց ծագեց առհասարակ անդամների ռոճիկը պակասեցնել, պ. Վարդան Եղիազարեանը մի ազգու ճառով սկսեց բացատրել դումայի այդ ապօրինի վարմունքը, և աւելացրեց՝ եթէ մենք այդպէս վարվինք, դրանով տեղիք կը տանք որ այսուհետև ոչ մի օրինաւոր մարդ յանձն չի առնի այստեղ ծառայութիւն մտնել։ Պարոնի այդ ճառը մեծ ազդեցութիւն ունեցաւ և ուղղավայի անդամների ռոճիկը մնաց նոյնը։ Բայց այսօր այդ պարոնը լուռ էր. ինչով բացատրել այդ լռութիւնը—ինձ հասկանալի չէ։ Ես նկարիչ չեմ, ապա թէ ոչ մի այսպիսի կարիկատուրա կը նկարէի. մի հրապարակ, այդտեղ ձիերի վրա նստած մի քանի ձայնաւորներ, որ կողմը քշելիս մինէին դոքա ձիերը, միւսները բերանները բաց դրանց ետեւից վազ տալիս։

Հոկտեմբերի 6-ին դարձեալ մի նիստ կար հաշուապահ (бухгалтеръ) Շպակովսկու ռօճիկը պակասացնելու մասին. թէև դուման գոհ է այդ պարոնից, բայց կամենում է ռօճիկը 1000 ր., պակասեցնել, որովհետև քաղաքը մինչև վիզը պարտքի մէջ է խրված։ Երևակայեցէք մի մարդ, որ ընտանիքի տէր է, տան, ծառայի, փայտի, ուտելիքի, ագանելիքի փող է տալիս. շատ է 1000 ր. պէտք է վեց հարիւր բուբլ։ 400 բուբլով քաղաքի 70,000 ր. պարտքը կը վճարենք, իսկ սակաւ ռօճիկ ստացողները ինչեր են անում մեր կոնսիստորիաների նման, այդ ոչ ոք չէ ուզում հասկանալ։ Գուցէ վաղը մի ձայնաւոր ասի. ինչ հարկաւոր է վարչութեան մէջ ծառայ պահել, թող վարչութեան գրագիրը մի և նոյն ժամանակ սրբի և սեղանների վրա նստած թողը։ Այդ զարմանալի չէ մեր ձայնաւոր վաճառականների մօտ, վասն զի նա իր գործակատարի հետ էլ նոյն մտօղով վարվում «այ տղա, Պետրոս, շատ արրիս էս խորշնի լոբին մի տար տուն հասցրու» ասում է վաճառականը իր գործակատարին. ի հարկէ այդ գաղափարը նա կը պաշտպանի ամեն տեղ։

Լսեցի, որ տեղոյս Գայանեան դպրոցի հոգաբարձուհիք մի խնդրագրով դիմել են Վեհ. Կաթուղիկոսին արձակել տեսուչ հայր Մելեանցին. կաթողիկոսը դարձեալ մի կոնդակով հաստատում է տէր հօր իրաւունքը։ Եթէ ճշմարիտ հոգաբարձուհիք խնդրագրով դիմել են կաթողիկոսին և չէ յարգվել նրանց խնդիրքը, էլ ինչ հոգաբարձուհիք, ինչ ընտրութիւն. մի անգամ թող Էջմիածնից մի հրաման էլ գայ թէ դպրոցը Մելեանցի սեփականութիւն է, այն ժամանակ էլ ով իրաւունք կունենայ այդ մարդու մասնաւոր գործերին խառնվելու։

Գրեթէ ամեն տեղից նպաստ ուղարկեցին Վիէննայի հայոց հարցի պաշտպան ֆրանսիական թերթի, Երևանը դեռ ևս չէզոք է մնում. պառուելի քաղաքացիք, հացկերոյթների ժամանակ գլխներդ Դալմա գինով տաքացած Ներսէսի, Խորէնի կենացները խմելով ազգի վերքը չէ բժշկվում, գործ է հարկաւոր գործ, և ոչ նիսիա ազգասիրութիւն։

***

ՆԱՄԱԿ ՄՕՍԿՎԱՑԻՑ

—

Հոկտեմբերի 10-ին

Արդէն մի քանի օր է, որ ստացվեցաւ այստեղ, Մոսկվայում պ. բժիշկ Տիգրանեանցի «Առողջապահական թերթը»-ը։ Շտապում ենք բաժանել ձեզ հետ այն քաղցր տպաւորութիւնը, որ թողեց մեզ վրա այդ թերթը։ Մենք զմայլած էինք բժշկի առաջնորդող յօդուածով, հիացած նրա սահուն ոճով ու բոլորովին ժողովրդական լեզուով. այո, ժողովրդի համար գրողը պէտք է ժողովրդի լեզուով խօսէ, ժողովրդի ձևերով և դարձուածքներով։ Թերթը ամբողջապէս պատասխանում է այս պահանջներին։

«Առողջապահական թերթ»-ի պահանջը վաղուց զգացվում էր հայ հասարակութեան մէջ. ժողովուրդը ոչինչ տեղեկութիւն չունենալով ամենահասարակ հիւանդութիւնների վրա անգամ, հարկադրված դիմում էր իր «հաքիմներին» ու պառաւներին, որոնք շատ անգամ «յօնքը չինելու փոխարէն, աչքն էլ էին փուլ ածում», տգիտութիւնը ամենահասարակ առողջապահական օրէնքների մէջ ենթարկում էր նրան անհամար ցաւերի ու տանջանքների, որոնցից ազատվելու ոչ մի հնար չունենալով, նա կամ անհոգութեամբ սպասում էր գործի բնական վախճանին, կամ զգալով իր բոլոր թուլութիւնը, սրտաճաղ ու լեղապատառ այս կողմ, այն կողմն էր ընկնում, որպէս զի մէկը դարման անէ իր ցաւին։ Ահա այս նեղ դրութեան մէջ պ. Լևոն Տիգրանեանցը ձեռք է մեկնում ընկճված ժողովրդին, տալիս է նրան մտաւոր կերակրի հետ և նիւթական ապահովութիւն, պատսպարան կեանքի անհամար պատահարների դէմ. Նրա թերթի առաջին համարն իսկ ցոյց է տալիս որ ամեն մի ընթերցող կը գտնէ նրա մէջ բազմաթիւ դասեր, խրատներ և առողջապահական օրէնքներ իր օրը անվտանգ անցնելու համար։

Մենք մեծայոյս ենք, որ հայ հասարակութիւնը կը գնահատէ բժշկի՛ արած բարիքը և իր սեփական օգտի համար կաշխատէ ձեռք բերել «Առողջապահական թերթը»-ը. իսկ մենք՝ ուսանողներս չնորհաւորելով այդ թերթի լոյս տեսնելը, ցանկանում ենք նրա խմբագրին կատարեալ յաջողութիւն և անվեհեր տոկունութիւն իր սկսած գործի մէջ և խոստանում ենք ժամանակ առ ժամանակ, նպաստել նրան զանազան կարելի աշխատանքներով։ Աւելորդ չենք համարում չնորհակալութիւն յայտնել և այն աղնիւ բժիշկներին, որոնք աշխատակցում են պ. Տիգրանեանցի սկսած բազմօգուտ ձեռնարկութեան։

Չորս ուսանողներ

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

Ստացանք «Միացեալ ընկերութեան» համար 10 բուբլ Թիֆլիսաբնակ պ. Գրիգոր Խօջափարուխեանից։

—

Պ. Արտէմ Արտէմիչ Խարազովից ստացանք 8 բուբլ բաժանորդագին «Ժուրնալ դ'Օրիան» լրագրի։ Առաջվայ բաժանորդական փողերի հետ կանի 1,073 բուբլ 53 կոպէկ։

—

ԹԻՖԼԻՍԻ բէալական դպրոցի հայ աշակերտները խնդրում են մեր հայ գրողներին և թարգմանիչներին, որ բարեհաճեն նուիրել դպրոցի ապագայ հայկական գրադարանին իրանց հրատարակութիւններից մի մի օրինակ հետևեալ հասցէով. Въ Реальное училище Х. Чилингаряну.

—

Ցիշեցնում ենք մեր ընթերցողներին, որ այսօր երեկոյեան, 20-ին հոկտեմբերի, լինելու է մի կոնցէրտ Թիֆլիսի Ժողովարանում յօգուտ մեր քաղաքի կլասիկային գիմնազիայի չքաւոր աշակերտների։

—

Հասարակութեան ցանկութեամբ պ. Կազընեով կը տայ դարձեալ երկու ներկայացումն Արծրունու թատրոնում, մինը այսօր, իսկ երկրորդը հինգշաբթի օրը։ Կիրակի օր թատրոնը լի էր։

—

«Кавказъ» լրագրում դարձեալ տպվել է մի յօդուած հայոց խնդրի մասին։ «Մշակի» հետևեալ համարներից մինում կարտատպենք այդ յօդուածը։

—

ՄՕՍԿՎԱՑԻՑ մեզ հաղորդում են հետևեալը։ «Ասում են, որ Լազարեան ճեմարանի պրոֆէսօր վրաց լեզուի. պ. Օկրոմչէդէլով—Սերէբրիակով Թիֆլիսի հնագիտական ժողովում եղած ժամանակ նուիրել է բաւական մեծ գումար, մօտ 6,000 բուբլ մի գիւղատնտեսական ընկերութեան, որ կազմվել է մի քանի վրացիների մէջ։ Մի և նոյն պրոֆէսօրի մասին պատմում են, որ նա երկու երիտասարդի, որոնցից մինը հայ, իսկ միւսը վրացի, թոշակ է նշանակել ուսումնասիրելու գիւղատնտեսութիւնը նախ Ռուսաստանում և ապա կատարելագործվելու Եւրոպայում։ Գեղեցիկ գործ, որ կարող էր օրինակ դառնալ մեր կովասեցիների համար։»

—

Մի անգլիացի պարոն, որ վաճառականութեամբ է պարապում Բաթումի մէջ, որ ինքն բեռնաւորված է մեծ ընտանիքով և որ ամենևին հարուստ մարդ չէ, ընդունել էր իր տանը արտուինցի մի որբ հայ երեխային և ահա երկք թէ չորս տարի արդէն պահում էր և դաստիարակում էր իր հաշով երեխային իր տանը։ Այժմ այդ մարդուկը ընդունվեցաւ Թիֆլիսի Ներսիսեան դպրոցի մէջ որդեգիր դպրոցի հաշով։

—

ՆՈՒԽՈՒՑ մեզ գրում են։ «Հասարակութիւնը հաստատամտութեամբ դարձեալ շարունակում է պահանջել հաշիւ հոգաբարձութիւնից, իսկ նա լռում է։ Շուտով յունվար ամիսը մօտենում է, թող գոնէ այժմ կօպէկներով ժողոված դրամի հաշիւը տայ յարգելի հոգաբարձութիւնը։»

—

Մեզ հաղորդում են հետևեալը։ «Երկու ամիս է, որ Թիֆլիսի Ներսիսեան դպրոցը չունի տեսուչ։ Պետրոս Սիմէօնեանց նշանակված է տեսչի պաշտօնակատար։ Դրութիւնը, ասում են, շատ անորոշ և անհաստատ է. դպրոցի կառավարչութեան և դաստուութեան մէջ ընդհանուր ուղղութիւն չը կայ, դպրոցի բոլոր օրգանների մէջ գործողութեան միութիւնը և ամբողջութիւնը բացակայ է։»

—

Գաւառական մի քանի քաղաքներից մեզ գրում են, որ շատ տեղ հայոց դպրոցների մէջ սկսեցին այս տարի ընդհանուր աշխարհագրութեան հետ անցնել և Հայաստանի աշխարհագրութիւնը։ Այդ առիթով մեր թղթակիցներից մինը գրում է մեզ. «Հայաստանի աշխարհագրութեան դասաւուութիւնը շատ լաւ է առաջ գընում և շատ սիրով է ընդունվում աշակերտներից, թէև ափսոս որ մեր դպրոցների մանկավարժները չատ ուշ հասկացան այդ առարկայի մանկավարժական նշանակութիւնը։ Բայց այնու ամենայնիւ՝ լաւ է ուշ, քան թէ երբէք։»

—

ԲԱԳՈՒԻՑ մեզ գրում են որ այդտեղի հայ երիտասարդների մէջ ցանկութիւն կայ այս ձմեռը հրապարակական դասախօսութիւններ անել հայերէն լեզուով, որոնց առարկաներից մինը լինելու է նոյնպէս Հայաստանի աշխարհագրութիւնը։ Մուտքը նշանակվելու է շատ էժան, յօգուտ Բագուի այլ և այլ դպրոցների աշակերտների։

—

Թիւրքաց Հայաստանից ստացած մի մասնաւոր նամակից քաղում ենք հետևեալը։ «Սղերդի, Մոկսի և Շատախի կողմերի հայերը իրանց լեզուն մոռանալով, հեռացել են և եկեղեցուց։ Նրանց քահանաների մեծ մասը ոչ միայն հայերէն խօսել, այլ և կարդալ չը գիտեն, տարին միայն մի քանի անգամ թէ ժողովրդի և թէ նոյն իսկ իրանց համար անհասկանալի շարժուածներով և խօսքերով իբրև թէ պատարագ են ուզում մատուցանել։ Եթէ ուսման լոյսը դրանց շուտով չը հասնի, աւելացնում է նամակագիրը, դրանք շուտով կը խառնվեն տաճիկ և քիւրդ ցեղերի հետ։ Այդպիսով եւրոպացիները և թիւրքերը երբ խօսում են մահմետականների բազմութեան վրա Հայաստանում, մոռանում են որ հայաստանցի թիւրքերի և մանաւանդ քիւրդերի մեծ մասը վայրենացած, վայրենութեան մէջ ընկած հայերն են, աւելի ոչինչ։ Թիւրքիան ուշացնում է Հայաստանին ինքնավարութեան տալը, անդադար կրկնելով, թէ մահմետական տարրը զօրեղ է Հայաստանում։ Բայց եթէ Եւրոպան դարձեալ համբերի այդ անորոշ դրութիւնը և միշտ յետ կը գցի վերանորոգութիւնների պահանջելը, մահմետական տարրը աւելի էլ կը զօրեղանայ, որովհետև մահմետականութիւն բառը համահաւասար է տգիտութեան բառին։ Քանի կը յապաղեն երկրին ինքնավարութեան տալը, այնքան աւելի կը բազմանան մահմետականներ, որոնք ուրիշ բան չեն, եթէ ոչ վայրենացած հայեր։ Իսկապէս ամբողջ Հայաստանը բնակեցրած է հայերով, միայն թէ այդ հայերի մի մասը վայրենացած հայեր են, այսինքն թիւրքերը և քիւրդերը»։ Նոյն մասնաւոր նամակից քաղում ենք և հետևեալը։ «Հաքիարից ասանձին վիլայէթութիւն կազմելուց յետոյ տաճիկ տէրութիւնը կենտրոնացնում է այժմ իր զօրքերը Բաշ-Կալայում, որ Պարսկաստանին ընդդիմադրութեան գլխաւոր կէտն է։ Հաքիարի, Բինաբի և Սօուկ-Բուլագի կողմերի քրդերի փոխադարձ յարաբերութիւնները օրից օր վատանում են և լարվում, ցեղական ատելութեան ցոյցերը բազմանում են, ուրեմն քրդական լիգայի (միութեան) կազմելը անսպասելի բան է։»

—

«Արարատ» ամսագրի սեպտեմբերի տետրակի մէջ կարդում ենք հետևեալ տողերը։ «Խմբագրութիւնս ստացաւ մի գրքոյկ «Հայաստանի սովը և Էջմիածինը» անունով, որ ըստ ծանօթութեան «Մեղու Հայաստանի» լրագրի տպված է եղել Բարձրագոյն թոյլտուութեամբ, որը արձագանք է «Մշակի» չարունակ բարբանջմանց, յանդուգն յարձակմանց ընդդէմ Ս. Էջմիածնի և միանգամայն ընդհանուր հայ հոգևորականութեան և աւելի լաւ է ասել, որ ամբողջ գրքոյկն հաւաքածոյ է «Մշակի» առաջնորդող (մոլորեցնող) և նամակաձև յօդուածների, որք ըստ մեծի մասին Ալաշկերտի գաղթականաց 17 հազար բուբլից գումարին են վերաբերում։ Հանդերձը նաւաւինն է, իսկ ձայնը Յակոբին։ Արմենակ Սիւնի դիմակաւորեալ հեղինակի անունով հրատարակված է գրքոյկը, բայց իսկապէս «Մշակի» խմբագիրն է հանդէս դուրս եկած, որպէս զի հայ ժողովրդի լուրջ մասն չը ճանաչէ նրա վարձկան դիմակաւորութիւնը և նպատակը, որք պարզված են արդէն և բազումք գիտեն և քաջ կշռած են նորա արժէքն, գիտեն նաև որ «Մշակը» իր գոյութիւն առած օրից հայ եկեղեցու վարձեալ, ուխտեալ և նպատակաւոր թշնամի է։ Այո «Մշակը» այլոց գործիք (քանդելու) եղած է, բայց դատարկ տակառի նման խճուղիի վրա գոռոռալով միայն մանուկներին կարող է վախացնել, իսկ խելահասները գիտեն որ դատարկութիւն է «Մշակի» սպառնալիք, օդաբանութիւն կամ ցնորական երազներ են նրա ձայն և աղաղակ, ուստի խմբագրութիւնս աւելորդ է համարում այդ գրքոյկի ինքնին հերքեալ փաստերն հերքել, որի մասին շատ տեղերից հերքումներ ուղղված են ամսագրոյս, բայց նոցանից մի յօդուած կը հրատարակվի յաջորդ ամսում։ Էջմիածնի մէջ հրատարակվող ամսագրի այդ նշանաւոր տողերին մենք նուիրում ենք այսօր մեր առաջնորդող յօդուածը։

—

Մեզ սկսել են ուղարկել «Русскій Еврей» ռուս շաբաթաթերթը, որ հրատարակվում է Պետերբուրգում և ռուս հրէաների օրգանն է։ Հրէաները ունեն երեք օրգան Ռուսաստանում, իսկ հայերը ոչ մի հատ օրգան մինչև այժմ չը կարողացան ստեղծել մայրաքաղաքներից մինում։ Հրէական օրգանը շատ լաւ խմբագրված մի շաբաթաթերթ է։

—

ՂՈՒԲԱՑԻՑ մեզ գրում են։ «Քաղաքային ճարտարապետ (արխիտէկտօր) պ. Շչէլուչչէնկօ, զոհ դարձաւ այս օրերս փոստային ճանապարհների անբարեկարգ դրութեան։ Քաղաք վերադառնալու ժամանակ փոստային սայլը կոտրվում է և խեղճը ընկնում է գետի մէջ ու անհետանում։ Ահա երկու չաբաթ է ինչ որոնում են դիակը, բայց մինչև այժմ չեն կարողանում գտնել։ Պարոնը մի ծեր մարդ էր և հազիւ էր կարողանում համեստութեամբ պահպանել իր բազմազաւակ ընտանիքը։ Մինթէ ճանապարհների անկարգութեան վրա ուշադրութիւն չի դարձնի փոստային վարչութիւնը։ Կան մեր կողմերում շատ գետեր առանց կամուրջների, կան և այնպիսի փոքրիկ գետեր, որոնց զառիվայր ափերը վտանգաւոր են անում իջնելը։»

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԱՆԳԼԻԱ

—

Հոկտեմբերի 12-ին լօրդ Սալիսբիւրի խօսելով մի ժողովի առաջ ուրախութիւն յայտնեց այն առիթով, որ Գլադստօն խոստովանել է, թէ Եգիպտոսի գործերի լաւ կարգադրելուն և Անգլիայի շահերը Եգիպտոսում պաշտպանելուն նպաստել են պահպանողական մինիստրութեան գործադրած միջոցները։ Սալիսբիւրի յոյս ունի, որ Գլադստօն մինչև այժմ աշխատել է և այսուհետև էլ կաշխատի պահպանել այդ միջոցները, որ ազատամիտ մինիստրութիւնը միշտ կը պաշտպանէ անգլիական շահերը